

ին . թէ սպասուցուած չէ որ պահակներուն և ժողովուրդին միջև բախում մը տեղի ունեցած ըլլայ . թէ միեւնոյն բանը պատահած է նահանգին բոլոր այն մասերուն մէջ՝ ուր այս պատճառներով Չարդեր տեղի ունեցած են , կասկած չի թողուր որ զէնքերը բաշխուած են կառավարական հրամանով :

Երկու հայ երեւելիներ սպաննուած են , մին նոյնինքն վալիին աչքին տակ , միւսը այն տեսակ վայրի մը մէջ՝ ուր գացած էր վերջնոյս կողմէ իրեն վստահուած պաշտօն մը կատարելու համար : Կառավարութիւնը , ոչ միայն սճրագործները չի ձերբակալեց՝ այլ անոնցմով անդամ չի շահագրգռուեցաւ : Այս ընթացքը կը ձգտէր ոճրագործները քաջալերելու , գանձք ամէն տեսակ գրգռութիւններու մղելու և հրահրելու անոնց յուրիւնողները : Ժամը Գիւր բոլոր կառավարական պաշտօնեաները , երեւելիները , ինչպէս նաեւ խուժանը հաւաքուած էին՝ ամէնքը կրելով փաթթոց : Ասոր վրայ Հայերը , որ առաւօտէն ի վեր իրենց գործերով զբաղած էին , ստիպուած են իրենց վաճառատուները գոցել և ազատանիլ իրենց տուները : Ասիկա բացարձակապէս անհերքելի սպառնաց մըն էր թէ իրենք չէին կրնանար ոչ մէկ յարձակողական միտում ունենալ :

Աստուգուրի Չարդերուն ժամանակ , մտքերը խաղաղացնելու պատրուակին տակ , կը ստիպէին Հայերը որպէսզի տուներէն դուրս ելլեն և խանութները վերարանան . իրականութեան մէջ նպատակին էր զրկել զանոնք ամէն ինքնապաշտպանական միջոցէ և խլամներու կողմէ անոնց քնաջնջումը դիւրացնել : Ատանայի վայրն զիմած է միեւնոյն միջոցին : Այնպէս որ Չարդը և կողպուտը մեթատիկ կերպով սկսուած է խողխողումովը Հասերուն , որոնք վալիին պնդումներուն տեղի տալով , կը գանուէին փողոցներուն կամ իրենց վաճա-